

Լրատու

Լոյս կը տեսնէ 2006 թ. Սեպտեմբերին

Կիպրոսի Յամայնի Պետական Ներկայացուցիչի Գրասենեակի

Թիւ 11
ԲԱՑԱՌԻԿ

ԴԵԿՏԵՄԲԵՐ 2013

Սիրելի հայրենակիցներ,

Այս տարի արտակարգ իրավիճակներով լեցուն տարի մը բոլորեցինք, դիմագրաւելով այնպիսի իրադարձություններ, որոնք Կիպրոսի պատմութեան մէջ, 1974-ի դէպքերէն ետք, ամենադժուար տարին կարելի եղաւ համարել թէ՝ տնտեսական եւ թէ քաղաքական առումներով։ Քաղաքական գետնի վրայ առ այժմ կը գտնուինք շատ բարդ հանգրուանի մը մէջ, իսկ Մարտ ամսուան դրամատնային համակարգի քայլայումը՝ մեր փոքր կղզին փոխադրեց տնտեսական ճգնաժամի անմենավտանգաւոր աստիճանին։ Վերջին տուեալներուն համաձայն, անգործութեան համեմատութիւնը կը գերազանցէ 17%, իսկ կացութիւնը բարելաւուելու նշոյլները քիչ մը հեռու կը թուին ըլլալ։ Կառավարութիւնը, տքնածան աշխատանք կը տանի տարբեր ծրագիրներու մշակումով եւ զանազան միջոցներու դիմելով կը փորձէ այս երեւոյթին առաջքը առնել։ Հետեւաբար, իրաքանչիւրէս կը պահանջուի համբերութիւն, լաւատես մօտեցում եւ բարոյապէս տոկունութիւն, որոնք ուշ կամ կանուխ անպայման պիտի առաջնորդեն մեզ դուրս գալու ներկայի անել կացութիւններէն։



Ինչ կը վերաբերի Սուրիոյ իրավիճակին, անցեալ տար-
ւընէ այս տարի, քաղաքական գետնի վրայ որեւէ փոփո-
խութիւն չկայ: Յարցը նոյն ծեւով կը շարունակուի եւ Սու-
րիոյ ապագան կը մնայ անորոշ: Յայ համայնքը կ'ապրի
ծանր օրեր եւ տեղային Ազգային Իշխանութիւնն ու միու-
թիւնները, կը փորձեն իրենց կարելիութեան սահմաններէն
ներս նիւթական եւ բարոյական օժանդակութիւն տրա-
մադրել տուժողներուն: Յոյսով ենք, որ 2014 տարուան ըն-
թացքին, քաղաքական նոր իրադարձութիւններ կ'արձա-
նագրուին եւ վերջ մը կը դրուի այս անբաղձալի պատե-
րազմին:

Գալով մեր Գրասենեակի գործունէութեան, ինչպէս ծեզ-
մէ շատեր ականատես եղան, Նոյեմբեր 9-ին մեծ յաջողու-
թեամբ իրականացաւ «Ժողովրդական Երգիչ» համոյիք ե-
րեկոն, որու մասին մանրամասնորէն անդրադարձած ենք
«Լրատու»ի յաջորդող էջերուն մէջ:

Նոյեմբերի վերջաւորութեան, երկար տարիներու վրայ
երկարող աշխատանքներու որպէս արդիւնք, Սլովաքիոյ
դեսպանատան նախաձեռնութեամբ եւ Երեսփոխանական
Գրասենեակի միացեալ գործակցութեամբ, քաղաքական
մակարդակի այցելութիւն մը իրականացաւ Կիպրոսի բռն-
նագրաւեալ շրջանին մէջ գտնուող Սուրբ Մակար Վանա-
կան համալիր, զգաստութեան ալիք մը ստեղծելով օտար
այցելուներուն մօտ, որուն մասին լայնօրէն արձագանգեց
տեղական մամուլը: Մանրամասնութիւնները կարդալ
«Լրատու»ի 8-րդ էջին վրայ:

Իսկ, Դեկտեմբեր 2-ին, Նիկոսիոյ Յամալսարանին
UNESCO ամպիոնին կազմակերպած «Բազմամշակութա-
յին Կիպրոս. Կիպրահայ Յամայնքը» նիւթով միջոցառումը,
շօշափելի արդիւնք մը տուաւ, երբ ծեռնարկի աւարտին,
յայտարարուեցաւ երկու 50% կրթաթոշակներու շնորհումը
հայ համայնքի լաւագոյն նորաւարտ աշակերտներու: Այս

մասին անջատ բաժինով նշում կատարած ենք «Լրատու»ի 12-րդ էջին վրայ:

Վերջապէս, վերոնշեալ իրագործումները ի մտի ունենալով, կը հաստատեմ թէ մեր աշխատանքները կը շարունակուին զանազան ոլորտներէ ներս ու պիտի շարունակւին նոյն թափով, որպէսզի ապահովուի Կիպրահայութեան վերելքն ու յարատեւութիւնը:

Սիրելիներ,

Շնորհաւորելով ձեր բոլորին Նոր Տարին եւ Ս. Ծնունդը, մաղթանքս է, որ 2014 տարին թեւակոխենք նոր տեսլականով, նոր յոյսով եւ նորանոր ծրագիրներով:

Վարդգէս Մահտեսեան

Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ

ԵՌԱՄՍԵԱՅ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ

Կիպրահայ գաղութի կեանքեն

Չորեքշաբթի, 6 Նոյեմբեր 2013-ին, Պետական ներկայացուցիչը ու իր տիկինը յատուկ հրաէր ստանալով, ներկայ գտնուեցան Լառնաքայի Յայ Ակումբին կազմակերպած «Յայկական Յուշակոթողները Կիպրոսի մէջ» ձեռնարկին, որ տեղի ունեցաւ Լառնաքայի Նարեկ Վարժարանի սրահին մէջ: Բանախօսն էր Պրն. Ալեքսանդր Յաճիլիրաս:

Կիրակի, 24 Նոյեմբեր 2013-ին, Տէր եւ Տիկին Վարդգևս Մահտեսեաններ ներկայ գտնուեցան Նիկոսիոյ Ս. Աստւածածին Եկեղեցւոյ Անուանակոչութեան տօնին առիթով մատուցուած Ս. Պատարագին եւ մատաղի օրինութեան արարողութեան:

Չորեքշաբթի, 27 Նոյեմբեր 2013-ին, յատկապէս հրաւիրուելով, Պետական ներկայացուցիչը եւ իր տիկինը ներկայ գտնուեցան ՀՕՍ-ի «Սոսէ» մասնաճիւղի 25-ամեակի հանդիսութեան, որ տեղի ունեցաւ Նիկոսիոյ Նարեկ Վարժարանի սրահին մէջ:

Չորեքշաբթի, 4 Դեկտեմբեր 2013-ին, Տէր եւ Տիկին Վարդգևս Մահտեսեաններ, ներկայ գտնուեցան Յամագգային «Օշական» մասնաճիւղի «Պիմակ» թատերախումբի ներկայացուցած՝ Յարութ Թահմազեանի բեմադրած, «Սխալ Ուղղութեամբ» զաւեշտին, որ տեղի ունեցաւ Առաջնորդարանի «Վ. Իւթիւնեան» սրահին մէջ:

Կիրակի, 15 Դեկտեմբեր 2013-ին, Տէր եւ Տիկին Վարդգևս Մահտեսեաններ ներկայ գտնուեցան Կիպրահայ Յայատառ Մամուլի Օրկաններու կազմակերպած «Յայատառ Մամուլին Դիմագրաւած Խնդիրները» գրոյց-քննարկումին, նուիրուած Գերաշնորհ Տէր Վարուժան Արքեպիս-

կոպոս Հերկելեանի մամլոյ-հրատարակչական գործունեութիւններու 25-ամեակին, որ տեղի ունեցաւ «Վ. Իւթիւճեան» սրահին մէջ, հովանաւորութեամբ Պրն. Վարդգէս Մահտեսեանի:

Չորեքշաբթի, 18 Դեկտեմբեր 2013-ին, Պետական Ներկայացուցիչը ընկերակցութեամբ իր տիկնոջ, ներկայ գլուխութեաւ Նիկոսիոյ Նարեկ Վարժարանի Մանկապարտէզի եւ Նախապատրաստական դասարաններու Կաղանդի հանդէսին, որ տեղի ունեցաւ դպրոցի սրահին մէջ:

Նոյն օրը, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններ ներկայ գտնութեան նաեւ Կոյրերու դպրոցին մէջ տեղի ունեցած Կաղանդի հանդէսին:

Պաշտօնական մակարդակի համդիպումներ եւ ձեռնարկներ

Հինգշաբթի, 17 Դոկտեմբեր 2013-ին, Պրն. Վարդգէս Մահտեսեան յատկապէս հրաւիրուելով, մասնակցեցաւ European People's Party-ի 16-րդ միջ-կրօնական Երկխոսութեան խորհրդաժողովին եւ կեսօրուան ճաշկերոյթին, որ տեղի ունեցաւ Նիկոսիոյ «Յիլթըն» պանդոկին մէջ:

Երկուշաբթի, 4 Նոյեմբեր 2013-ին, Պետական Ներկայացուցիչը, խորհրդարանի իր Գրասենեակին մէջ, հանդիպում մը ունեցաւ Ալովաքիոյ դեսպան Ն.Վ. Տիկին Օքսանա Թոմովսկիի հետ, քննարկելու պաշտօնական եւ քաղաքական մակարդակի վրայ այցելութիւն մը իրականացնելու մանրամասնութիւնները դէպի Կիպրոսի բռնագրաւեալ շրջանին մէջ գտնուող Մակարավանք համալիրը:

Ուրբաթ, 20 Դեկտեմբեր 2013-ին, Պրն. Վարդգէս Մահտեսեան տեսակցութիւն մը ունեցաւ Ներքին Գործոց Նախարարութեամ նորանշանակ Ընդհանուր Տնօրէն Պրն. Կոստանդինոս Նիքոլայիտիսին հետ, Կիպրահայ Յամայնքը յուզող հարցերու շուրջ:

«Ժողովրդական Երգիչ» համոյթի աննախընթաց ելոյթ



Հաբաթ, 9 Նոյեմբեր 2013-ին, Ստորովոլոսի Քաղաքապետարանի շքեղ հանդիսասրահին մէջ, մեծ յաջողութեամբ տեղի ունեցաւ «Ժողովրդական Երգիչ» մշակութային երեկոն, որուն ներկայ գտնուեցան աւելի քան 850 անհատներ, ծայրէ ծայր լեցնելով սրահը:



Բացման խօսքով ելոյթ ունեցաւ Պրն. Մահտես-եան, որ նշեց, թէ այս ելոյթը տեղի կ'ունենայ Կիպրոսի տնտեսական ամենածգնաժամային պահերուն եւ որուն իրականացումը, մեզմէ պահանջեց յանդուզն որոշումներ կայացմել կառչած մնալով մեր առաքելութեան եւ սկզբունքներուն:



Յայրենիքէն ժամանած արուեստագէտներն ու երաժիշտները, հայարոյ զգացմունքով մեկնաբանեցին մեր մշակոյթի ողնաշարը համարուող աշուղական եւ ժողովրդական երգերը, յուզմունք եւ միեւնոյն ժամանակ խանդավառութիւն պարգեւելով ներկաներուն: Երկու ժամ տեսլութեամբ յայտագիրի ընթացքին, Կիպրահայութիւնը ընբոշինեց Սայեաթ Նովայի, Աշուղ Շերամի ու Երամի, Աշուղ Աշուտի եւ Յավասիի, ինչպէս նաև համոյթի գեղարևսական ղեկավար եւ թառահար Արտեմ Խաչատրուի յօրինումները, որոնց մեղմ երաժշտութեան տակ ճկունութեամբ ու հաստատական պարեցին Յանազգայինի «Սիփան» պարախումբի աղջիկներն ու տղաքը, պարուսոյց Պետրոս Ղարիպեանի գլխաւորութեամբ:

Ելոյթի աւարտին, հանդիսատեսները յագեցած ու գոհունակութեամբ դրւու եկան սրահէն, Երախտագիտական խօսքեր յայտնելով Երեսփոխանական Գրասենեակի տարած աշխատանքին:

Երեկոն շարունակուեցաւ Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններու բնակարանը, ուր իհրասիրուեցան արուեստագէտները, «Սիփան» պարախումբի եւ Երեսփո-

խանական Գրասենեակի Մշակութային Յանձնախումբի անդամները, հաճելի պահեր անցընելով:

Յաջորդ օրը, ամոնք այցելեցին Ս. Աստուածածին Եկեղեցի, ապա Մելգոնեան Կրթական Յաստատութիւն եւ շարունակեցին իրենց համար ծրագրուած միօրեայ պտոյտը դեպի Այյա Նաբայի ծովեզերքը: Յետմիջօրէին, ամոնք վերադարձան Յայստան, Կիպրոսի ու Կիպրահայութեան մասին ամենալաւագոյն յիշատակներով:

Քաղաքական մակարդակի այցելութիւն Սուրբ Մակարավանք



Քինգարքի, 28 Նոյեմբեր 2013-ին, նախաձեռնութեամբ Սլովաքիոյ դեսպան Ն.Վ. Տիկին Օքսանա Թոմովայի եւ համագործակցութեամբ Կիպրահայ Յանայնքի Պետական Ներկայացուցիչ Պրն. Վարդգէս Մահտեսեանի ու ընկերակցութեամբ Թեմական ժողովի ատենապետ Պրն. Սե-

պուի Դաւիթեանի, Սուրբ Մակարավանք այցելութիւն մը ի-րականացաւ, մասնակցութեամբ Յոյն եւ Թուրք Կիպրական քաղաքական կուսակցութիւններու ներկայացուցիչներուն, զանազան քաղաքական դէմքերու, լրագրողներու եւ հեռատեսիլի կայաններու: Այս այցելութեան նպատակն էր Երկխօսութեան նպաստաւոր մթնոլորտ ստեղծելով լուսաբանել կողմերը, պատմանշակութային ժառանգութիւն ներկայացնող վաճական համալիրներու ունեցած անփոխարիմելի արժեքը համայն Կիպրոսի համար եւ այդ իսկ պատճառով յատուկ հոգածութեան առարկայ դարձնել զանոնք:



Այցելողները, տեսմելով Մակարավանքին անմիշիթար վիճակը, ականատեսի աչքերով ու խիստ ազդուած զգացմունքներով արտայայտութիւններ ունեցան ընկերակցող լրագրողներուն եւ հեռատեսիլի կայաններուն, յայտնելով իրենց պատրաստակամութիւնը անվերապահօրէն օժանդակելու Վաճքի վերանորոգման ծրագիրներուն:



Ընդգծենք, թէ Վանքի մատուռի մուտքին, Պետական Ներկայացուցիչը հակիրծ ձեւով այցելուներուն ներկայացուց Մակարավանքին պատմականը եւ կառոյցին հետ առնչուող վերջին մի քանի տարիներու իրադարձութիւնները։ Այցելուներուն նաեւ տրուեցան Մակարավանքին մասին պատրաստուած յատուկ թերթիկ մը, որ կը ներփակէր մանրամասն պատմական տեղեկութիւններ։ Ապա, Պին։ Մահտեսեան պատասխանեց իրեն ուղղուած հարցումներուն։

Տեղին է յիշել, որ Մակարավանք այցելութենէն յետոյ, ամբողջ խումբը ուղղուեցաւ Սիրոտ, ուր կը գտնուի Սուլը Փանքէլէյնոնի պատմական վանքը, որ դադեալ կը ներկայացնէ ցաւալի վիճակ մը։

Այս զոյզ պատմական վանական համալիրները տրուած այցելութեան առիթով, հեռատեսիլի կայանները եւ թերթերը լայնօրէն արձագանգեցին։

Յոյսով ենք, որ տարուած աշխատանքներուն շնորհիւ եւ մօտ ատենէն իրականութիւն պիտի դաշնայ մեր բոլորին ուխտատեղին համարուող Մակարավանքին վերանորոգումը։

Նիկոսիոյ Համալսարանի կազմակերպած՝ «Բազմամշակութային Կիպրոս. Կիպրահայ Համայնքը» երեկոն



Երկուշաբթի, 2 Նեկտեմբեր 2013-ին, կազմակերպութեամբ Նիկոսիոյ Համալսարանին UNESCO ամպիոնին, տեղի ունեցաւ պատշաճ միջոցառում նը «Բազմամշակութային Կիպրոս. Կիպրահայ Համայնքը» նիւթով, համալսարանին Cine Studio սրահին մէջ:

Սոյն ձեռնարկին, խօսք առին յաջորդաբար Դոկտ. Էմիլիոս Սոլոմոնն, որ Նիկոսիոյ Համալսարանին UNESCO ամպիոնին նախագահն է, Նիկոսիոյ Համալսարանի Ռեկտոր Դոկտ. Միխալիս Աթթալիտիս, Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ Պրն. Վարդգէս Մահտեսեան եւ Կիպրոսի



Հանրապետութեան Կրօնական Փոքրամասնութիւններու հարցերով Յանձնակատար Տիկին Քէթի Քլիրիտու: Գեղարւեստական բաժինով Ելոյթ ունեցան Համազգայինի «Սիփան» եւ «Նանօր» մանկապատանեկան պարախումբերը, հայրենի պարուսոյց եւ գեղարուեստական դեկավար Պրն. Պետրոս Ղարիպեանի գլխաւորութեամբ: Ապա, ներկայացուեցաւ «Հայերը Կիպրոսի մէջ» վաւերագրական ժապաւենին ամփոփ տարբերակը, որմէ ետք խօսք առաւ Նարեկ Հայկական Վարժարամներու նախկին տնօրէն Պրն. Վարդան Թաշճեան:

Զեռնարկը վերջ գտաւ հիւրասիրութեամբ, որ դարձեալ կազմակերպուած էր Նիկոսիոյ Համալսարամին կողմէ:

Կրթաթոշակ

Վերոնշեալ ձեռնարկի աւարտին եւ ի մտի ունենալով կիպրահայ համայնքի ունեցած երկար տարիներու արժեքաւոր ներդրումը Կիպրոսէն ներս, Դոկտ. Սոլոմոն յայտարարեց, թէ Նիկոսիոյ Համալսարամը յետ այսու 2014 տարեշրջանէն սկսեալ, երկու 50% համեմատութեամբ կրթաթոշակներ պիտի տրամադրէ Կիպրահայ կամ Կիպրոսի մէջ մշտական եւ օրինական բնակութիւն հաստատած, ինչպէս նաեւ բարձրագոյն նիշեր ունեցող նոր շրջանաւարտ աշակերտներու:

Տեղեկացնենք, թէ արոէն իսկ ստացած ենք անհրաժեշտ դիմումնագիրները այս կրթաթոշակներուն առնչութեամբ եւ փափաքող ու պայմանները ամբողջացնող աշակերտները կրնան անձանք դիմել Երեսփոխանական Գրասենեակ, ստանալու յաւելեալ տեղեկութիւններ եւ կամ հեռաձայնել 22-454540 թիւն, ամէն օր, բացի Շաբաթ եւ Կիրակի օրերէն, ժամը 08:30-16:30 միջեւ: Դիմումնագիրները Գրասենեակ յանձնելու վերջնական ժամկէտ՝ 31 Յուլիս 2013:

Շնորհաւորագիր



22 Հոկտեմբեր 2013 թուակիր նամակով մը, Պետական Ներկայացուցիչը շնորհաւորեց Տէր եւ Տիկին Յարութիւն Աննահունին, որպէս օրինակելի հայ ազգի զաւակներ, բարձր գնահատելով անոնց պատրաստականութիւնը Մայր Յայրենիքի եւ Ղարաբաղի հզօրացման ու բարգաւաճման ի նպաստ կատարած նուիրատուութեան համար:

Նուիրատուութիւնը յանձնելու արարողութիւնը տեղի ունեցաւ Ազգային Առաջնորդարանի հիւրասենեակին մէջ, Ներկայութեամբ Յայաստանի Յանրապետութեան Արտակարգ ու Լիազօր ռեսպան Ն.Վ. Գագիկ Ղալաչեանի, Թեմիս Կաթողիկոսական Փոխանորդ Վարուժան Արքեպիսկոպոս Ներկելեանի եւ Կիպրահայ Յանայնքի Պետական Ներկայացուցիչ Պրն. Վարդգէս Մահտեսեանի:

Ցաւակցագիր

Երկուշաբթի, 18 Նոյեմբեր 2013ին, Կիպրոսի Յանրապետութեան Նախկին Նախագահ Ղլաֆկոս Քլիրիտիսի մահուան տիսուր արիթով, Պետական Ներկայացուցիչը իր

ու Կիպրահայ գաղութի անունով, ցաւակցագիրներ յդեց համգուցեալին դստեր եւ Կիպրոսի Կրօնական Փոքրամասնութիւններու գծով յանձնակատար Տիկին Քէթի Քլիրիտուին եւ ՏԻՄԻ կուսակցութեան նախագահ Պրն. Աւերով Նեոֆիտուիին: Պրն. Մահտեսեան իր խոր վիշտը յայտնելով ընդգծեց, թէ անոր մահով Կիպրոսը կորսնցուց պատմական առաջնորդ մը, իսկ Հելլենիզմը՝ նշանաւոր անձնաւորութիւն մը:

Նշենք, թէ նոյն օրը առաւօտեան, Պետական Ներկայացուցիչը այցելելով Նախագահական պալատ, իր արձանագրութիւնը ձգեց այս առիթով յատուկ բացուած տոնարին մէջ, իսկ Երեքշաբթի, 19 Նոյեմբեր 2013-ին, անձամբ ներկայ գտնուեցաւ Ղլաֆկոս Քլիրիտիսի թաղման արարողութեան:

Այցելութիւն «Գալայժեան» Հանգստեան Տուն



Շաբաթ, 14 Նեկտեմբեր 2013-ին, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններ, ընկերակցութեամբ Թեմիս Կաթողիկոսական Փոխանորդ Վարուժան Արք Հերկելեանի, այցե-

լեցին «Գալայժեան» Հանգստեան Տուն եւ Ամանորեայ ու Ս. Ծննդեան լաւագոյն մաղթանքներով եւ անհատական նույնականացման մեջ տարեց հայրերն ու մայրերը:

«Նանօր» Մանկապատանեկան Պարախումբ



Չարաք, 21 Դեկտեմբեր 2013-ին, Նարեկ Վարժարանին ներս տեղի ունեցաւ աւանդական դարձած «Նանօր» մանկապատանեկան պարախումբի Նոր Տարուայ եւ Ս. Ծննդնոյի առիթով կազմակերպուած հաւաքոյթը: Փոքրիկները հաճելի պահեր անցուցին ներկայութեամբ Պետական Ներկայացուցիչին ու ծնողներուն: Պրճ. Մահտեսեան խօսք առնելով, շնորհակալութիւն յայտնեց երեխաներուն, անոնց հետեւողական մասնակցութեան համար: Չարունակելով իր խօսքը, Պետական Ներկայացուցիչը իր շնորհակալութիւնը յայտնեց նաեւ վաստակաւոր պարուսոյց Պրճ. Պետրոս Ղարիպեանին, անոր ցուցաբերած համբերութեան ու գոհողութեան համար: Ապա, տեղի ունեցաւ կաղանդչէքի բաշխում, որմէ ետք պարախումբի անդամները գոհունակութեամբ մեկնեցան սրահէն:

Վարդգէս Եւ Մակի Մահտեսեաններ

Կը շնորհաւորեն համայն հայութիւնը
 Ամանորի Եւ Ս. Ծնունդի
 գոյգ տօներուն առիթով՝
 մաղթելով Կիպրոսին Եւ
 մեր Մայր Հայրենիքին
 բարգաւաճում Եւ հիմնախնդիրներու
 բարւոք լուծում

ԿԻՊՐԱՅԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԻ ԳՐԱՍԵՆԵԱԿ

Թաղաքական Գրասենեակ

9B & C Kastorias Street, Ayia Paraskevi, 2002 Strovolos
 Հեռախոս 22- 45 45 40, Հեռատիպ 22- 42 46 42
 Ել. Հասցե office@armenianmp.com
 Կայքէջ՝ <http://www.armenianmp.com>

Խորհրդարանական Գրասենեակ

Office Δ-2-2, House of Representatives, 1402 Nicosia
 Հեռախոս 22- 40 72 02, Հեռատիպ 22- 40 74 42
 Ել. Հասցե vmahdessian@parliament.cy